ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

16.05.2023Թ.-Ի ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԳՈՒՍՏԱՎ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

18.05.2023թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

/նոր խմբագրությամբ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ 84-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

84-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարը կանցկացվի 2024թ. հունվարի 11-23-ը, Երևանում: Մասնակցության իրավունք կունենան.

ա. 2023 թ. հունվարի 1-ի և մայիսի 1-ի լավագույն 7 ամենաբարձր միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,

բ. 84-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստները,

գ. 83-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստները /եթե գործակցով ընդգրկված չեն ամենաբարձր վարկանիշ ունեցող 7 շախմատիստների ցանկում/:

*Եթե հավաքականի անդամներից որևէ մեկը ցանկություն հայտնի մասնակցելու առաջնության բարձրագույն խմբին, և մասնակիցների քանակը ավելանա, ապա կենտ լինելու դեպքում մասնակիցների թիվը կլրացվի ըստ վարկանիշի:

**Եթե ամենաբարձր վարկանիշ ունեցող 7 շախմատիստներից լինեն հրաժարվողներ, ապա տեղերը բացառապես կլրացվեն հաջորդ ամենաբարձր միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստներով:

***Եթե նախորդ տարվա առաջնության 1–3 տեղերը գրաված շախմատիստներից որևէ մեկը հանդիսանում է լավագույն 7 մասնակիցներից մեկը, ապա իրավունք է ստանում մասնակցելու հաջորդ բարձր վարկանիշ ունեցող շախմատիստը:

****Եթե հրաժարվող մասնակիցը առաջին խմբի 1–3 տեղերը գրաված շախմատիստներից է, ապա իրավունք է ստանում խաղալու 4-րդ տեղ գրաված շախմատիստը: Մասնակցության իրավունք ունեցող

շախմատիստները պետք է գրավոր հաստատեն իրենց մասնակցությունը մինչև 2023թ. դեկտեմբերի 10-ը, հակառակ դեպքում կկորցնեն մրցաշարին մասնակցելու իրենց իրավունքը:

84-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարը կանցկացվի 2023թ. օգոստոսի 21-ից սեպտեմբերի 1-ը, շրջանային մրցակարգով, 12 մասնակիցներով:

Մրցաշարը կազմակերպել ցանկացող մարզային ֆեդերացիաները մինչև 2023թ. հունիսի 1-ը պետք է Հայաստանի շախմատի ֆեդերացիա ներկայացնեն իրենց համապատասխան դիմումներն ու ֆինանսական առաջարկները:

Մասնակցության իրավունք ունեն.

ա. 2023 թ. հունվարի 1-ի և մայիսի 1-ի միջազգային վարկանիշների միջին ցուցանիշով 7 ամենաբարձր միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստներին հաջորդող և իրենց մասնակցությունը հաստատած 4 լավագույն շախմատիստները,

բ. 6 շախմատիստ Հայաստանի տղամարդկանց 2023թ. առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարից,

գ. Հայաստանի մինչև 18 տարեկան պատանիների 2023թ. չեմպիոնը,

դ. 1 շախմատիստ՝ ֆեդերացիայի որոշմամբ /մինչև 18 տարեկան պատանի շախմատիստներից/:

Թափուր տեղերը կլրացվեն Հայաստանի տղամարդկանց 2023թ. առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարից:

Մասնակցության ցանկություն ունեցող շախմատիստները պետք է գրավոր հաստատեն իրենց մասնակցությունը մինչև 2023թ. մայիսի 25-ը: Հակառակ դեպքում նրանք կկորցնեն մրցաշարին մասնակցելու իրենց իրավունքը:

Հայաստանի 84-րդ առաջնության 1-ին խմբի համար ընտրական փուլ է Հայաստանի տղամարդկանց 2023թ. առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը, որոնք կանցկացվեն շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մրցաշարը կանցկացվի 2023թ. մայիսի 28-ից հունիսի 4-ը Երևանում:

Այդ մրցաշարերում մասնակցության անհատական իրավունք ունեն.

ա. բարձրագույն և առաջին խմբի մրցաշարերում մասնակցության իրավունք չունեցող միջազգային գրոսմայստերներն ու վարպետները, ՖԻԴԵ-ի և ազգային վարպետները, կին գրոսմայստերներն ու միջազգային վարպետները,

բ. 2301 և բարձր ՖԻԴԵ-ի կամ ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,

գ. Հայաստանի մինչև 18 տարեկան պատանիների առաջնությունում 2-5-րդ տեղեր գրաված շախմատիստները,

դ. Հայաստանի մինչև 16 տարեկան պատանիների առաջնությունում 1-5-րդ տեղեր գրաված շախմատիստները,

ե. Հայաստանի մինչև 14 տարեկան պատանիների առաջնությունում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստները,

զ. Հայաստանի մինչև 12 տարեկան պատանիների առաջնությունում 1-ին տեղ գրաված շախմատիստը,
է. Հայաստանի մինչև 18 և 16 տարեկան աղջիկների առաջնությունում 1-ին տեղեր գրաված շախմատիստուհիները,

Հայաստանի տարածաշրջանային առաջնությունում մասնակցության անհատական իրավունք ունեն. 6-ական շախմատիստ Շիրակի, 5-ական շախմատիստ Կոտայքից, 4-ական Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերից, 2-ական՝ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզերից և Արցախից:

Հայաստանի շախմատի ֆեդերացիան սեփական հայեցողությամբ կարող է արտոնել լրացուցիչ շախմատիստների մասնակցությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ 79-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

79-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարը կանցկացվի Երևանում, 2024 թ. հունվարի 11-21-ը:

Մասնակցության իրավունք կունենան.

ա. Հայաստանի կանանց 78-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստուհիները,

բ. Կանանց միջազգային գրոսմայստերներն ու միջազգային վարպետները, ում 2023 թ. հունվարի 1-ի և մայիսի 1-ի միջազգային վարկանիշների միջին ցուցանիշը կլինի 2150 կետ կամ ավելի բարձր,

գ. Հայաստանի կանանց 79-րդ առաջնության 1-ին խմբի մրցաշարում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստուհիները:

Մասնակցության իրավունք ունեցող շախմատիստուհիները պետք է գրավոր հաստատեն իրենց մասնակցությունը մինչև 2023թ. դեկտեմբերի 10-ը, հակառակ դեպքում կկորցնեն մրցաշարին մասնակցելու իրենց իրավունքը:

79-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարը (Երևանի բաց առաջնություն) կանցկացվի 2023թ.-ի հուլիսի 23-ից օգոստոսի 2-ը, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մասնակցության իրավունք ունեն

ա. 2001 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները,

բ. կիսաեզրափակիչ մրցաշարում 1-10-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները,

գ. Հայաստանի մինչև 18, 16, 14 և 12 տարեկան աղջիկների առաջնությունում 1-3-րդ տեղ գրաված շախմատիստուհիները,

դ. Հայաստանի մինչև 10 տարեկան աղջիկների առաջնությունում 1-ին տեղ գրաված շախմատիստուհին, Հանրապետության մարզերը ներկայացնող 2025 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները մրցումների ընթացքում կապահովվեն հյուրանոցով և օրապահիկով:

Հայաստանի կանանց 79-րդ առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը (Երևանի բաց առաջնության կիսաեզրափակիչ) կանցկացվի Երևանում, 2023թ. մայիսի 28-ից հունիսի 4-ը, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: Մասնակցության իրավունք ունեն մինչև 2001 ազգային վարկանիշ ունեցող, ինչպես նաև առաջին և երկրորդ կարգային շախմատիստուհիները:

Հայաստանի շախմատի ֆեդերացիան սեփական հայեցողությամբ կարող է արտոնել լրացուցիչ շախմատիստների մասնակցությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Երևանում, 2023 թ. ապրիլի 13-23, ըստ հետևյալ տարիքային խմբերի.

Տղաներ

ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ,

բ.մինչև 10 տարեկան շախմատիստներ,

գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ,

զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ:

Աղջիկներ

ա.մինչև 10 տարեկան շախմատիստներ,

բ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

գ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

դ. մինչև 16 տարեկան շախմատիստներ,

ե. մինչև 18 տարեկան շախմատիստներ:

Բոլոր մրցաշարերը անցկացվում են շրջանային մրցակարգով, ընդ որում տղաների «բ» և «գ», աղջիկների «ա» և «բ», մրցաշարերը 12, իսկ տղաների «ա», «դ», «ե», «զ» և աղջիկների «գ», «դ», «ե» մրցաշարերը՝ 10 մասնակցով: Այս մրցաշարերի համար ընտրական փուլ են հանդիսանում Երևանը և հանրապետության մարզերը ներկայացնող շախմատիստների ընդհանուր կիսաեզրափակիչ մրցաշարերը: Ընտրական մրցաշարերը անցկացվում են առանձին տարիքային խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Պատանիների «բ»,«գ»,«դ»,«ե»,«զ» և աղջիկների «ա»,«բ»,«գ»,«դ»,«ե» մրցաշարերում մասնակցության անհատական իրավունք ունեն Հայաստանի 2022 թ. առաջնությունների հաղթողները, եթե նրանք մասնակցում են իրենց տարիքին համապատասխան մրցաշարում:

Վերը նշված մրցաշարերում ըստ տարիքային վարկանիշային ցուցակների մասնակցության անհատական իրավունք կստանան.

տղաներ՝
<<գ>> մրցաշարում՝ 1 շախմատիստ, <<դ>> մրցաշարում՝ 2 շախմատիստ, <<ե>> մրցաշարում՝ 3 շախմատիստ, <<զ>> մրցաշարում՝ 5 շախմատիստ,

աղջիկներ՝

<<բ>> մրցաշարում՝ 1 շախմատիստ, <<գ>> մրցաշարում՝ 2 շախմատիստ, <<դ>> մրցաշարում՝ 3 շախմատիստ.

<<ե>> մրցաշարում մասնակցության իրավունքը տրվում է 1980 և բարձր վարկանիշով շախմատիստուհիներին:
Այստեղ և հետագայում հիմք է ընդունվում 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ հրապարակված վարկանիշային ցուցակը, ընդ որում, եթե հաշվարկվել է շախմատիստի խաղացած առնվազն 40 պարտիա:

Եթե Հայաստանի չեմպիոնները նշված վարկանիշային սանդղակներում են, մասնակցության իրավունք է տրվում համապատասխան վարկանիշային ցուցակի հաջորդ շախմատիստին: Բոլոր մրցաշարերում թափուր տեղերը լրացվում են Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարերից:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ բոլոր մրցաշարերում հանդես գալու իրավունք ստացած ոչ երևանաբնակ մասնակիցները մրցումների ընթացքում կապահովվեն հյուրանոցով և օրապահիկով:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնություններում թույլատրվում է շախմատիստի մասնակցությունը ավելի բարձր տարիքային խմբերի մրցաշարերին: Այդ մասին նա, ինչպես նաև մասնակցության անհատական իրավունք ունեցող շախմատիստները պետք է տեղյակ պահեն մինչև 2023 թ. փետրվարի 25-ը:

Ընտրական բոլոր մրցաշարերում արգելվում է այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության եզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերում 1-ին տեղ գրաված շախմատիստները կգործուղվեն մասնակցելու աշխարհի պատանեկան առաջնությանը, իսկ 2-րդ տեղ գրաված շախմատիստները՝ Եվրոպայի պատանեկան առաջնությանը:

Մինչև 8 տարեկան տղաների եզրափակիչ մրցաշարում 1-ին տեղ գրաված շախմատիստին ֆեդերացիան կգործուղի մասնակցելու աշխարհի պատանեկան առաջնությանը, իսկ 2-րդ տեղ գրաված շախմատիստին՝

Եվրոպայի պատանեկան առաջնությանը, այն պայմանով, որ շախմատիստին պարտադիր կարգով պետք է ուղեկցի անհատական մարզիչը կամ ծնողը: Մարզչի կամ ծնողի գործուղման հետ կապված ծախսերը ֆեդերացիան չի հոգալու:

Ֆեդերացիայի որոշման համաձայն, ևս 2-ական շնորհալի պատանի շախմատիստներ իրավունք կստանան պետական միջոցների հաշվին մասնակցելու աշխարհի և Եվրոպայի պատանիների առաջնություններին:

Սեփական միջոցների հաշվին այդ առաջնություններում մասնակցության իրավունք ունեն նաև. ա. 3-5-րդ տեղեր գրաված շախմատիստները,

բ. 6-10-րդ տեղեր գրաված այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբում ամենաբարձր ազգային վարկանիշ ունեցող 5 շախմատիստների ցուցակի մեջ են, իսկ մինչև 10 տարեկան այն տղա և աղջիկ շախմատիստները, ովքեր իրենց տարիքի շախմատիստների ցուցակում 1-2-րդ տեղերում են,

գ.Հայաստանի նախորդ տարվա չեմպիոնները,

դ.Աշխարհի և Եվրոպայի 8-18 տարեկան պատանիների և աղջիկների առաջնություններում 1-10-րդ տեղեր գրաված շախմատիստները,

ե. 6-րդ տեղ գրաված այն շախմատիստները, որոնք հաջորդ տարի հանդես են գալու նույն տարիքային խմբի մրցաշարերում և եթե 1-5 տեղեր գրաված մասնակիցների թվում իրենց տարիքի այլ շախմատիստ չկա,

զ. Ստեփան Ավագյանի հիշատակին նվիրված «Ջերմուկ 2023» պատանեկան միջազգային բաց մրցաշարի մինչև 8, 10, 12 և 14 տարիքային խմբերում 1-ին հորիզանական գրաված շախմատիստները:

Սեփական միջոցների հաշվին մասնակցության իրավունք ձեռք բերած շախմատիստներին պարտադիր կարգով պետք է ուղեկցի անհատական մարզիչը:

Աշխարհի մինչև 20 տարեկան պատանիների և աղջիկների առաջնություններին հանրապետությունը ներկայացնող մարզիկները կընտրվեն Հայաստանի տղամարդկանց և կանանց առաջնությունների արդյունքներով:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության մասնակիցների հայտերը Երևանի քաղաքային ֆեդերացիան և մարզային համապատասխան կազմակերպությունները պետք է ներկայացնեն մինչև 2023 թ. ապրիլի 4-ը / հայտերի ընդունման վերջնաժամկետն է/:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում /հասցե՝ Շևչենկոյի փող. 34, հեռ.: 448476/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԵՐ

Կիսաեզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն 2023 թ. մարտի 20-ից 30-ը, մարզերը և Երևանը ներկայացնող շախմատիստների մասնակցությամբ, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: Այս մրցաշարերի համար ընտրական փուլ են հանդիսանում Երևանի և հանրապետության մարզերի պատանիների առաջնությունների մրցաշարերը:

Կիսաեզրափակիչ մրցաշարերում մասնակցության անհատական իրավունք ունեն Հայաստանի 2022 թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերում 2-3-րդ տեղեր գրաված պատանիներն ու աղջիկները:

Այստեղ և հետագայում հիմք է ընդունվում 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ հրապարակված վարկանիշային ցուցակը, ընդ որում, եթե հաշվարկվել է շախմատիստի խաղացած առնվազն 40 պարտիա:

Մինչև 8 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն

-2-րդ կարգային շախմատիստները

Երևանից 16 շախմատիստ, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Արարատի մարզերից՝ 5-ական, Արցախից, Սյունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերից՝ 3-ական, Տավուշի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերից՝ 2-ական շախմատիստ: Երևանը ներկայացնող շախմատիստները պետք է ունենան առնվազն 4-րդ կարգ: Մարզերի ներկայացուցիչների համար կարգ ունենալը պարտադիր պայման չէ:

Կիսաեզրափակիչ մրցաշարի արդյունքներով 1-10-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները կնվաճեն եզրափակիչ մրցաշարի ուղեգրեր:

Մինչև 10 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն.

- 2001 և բարձր ազգային վարկանիշով շախմատիստները,

- 25 շախմատիստ Երևանից, 8-ը Կոտայքի մարզից, 7-ական Շիրակի, Արարատի և Արմավիրի մարզերից, 6-ական Լոռու մարզից, 5-ը՝ Արցախից, 4-ական Արագածոտնի և Սյունիքի մարզերից, 3-ական Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերից:

Երևանը ներկայացնող շախմատիստները պետք է ունենան առնվազն 2-րդ , իսկ մարզերի ներկայացուցիչները՝ առնվազն 3-րդ կարգ:

Մինչև 12 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն.

-2026 և բարձր ազգային վարկանիշով շախմատիստները.

-20 շախմատիստ Երևանից, 7-ական Արարատի և Կոտայքի մարզերից, 6-ական՝ Շիրակի, Լոռու և Արմավիրի մարզերից, 5-ական՝ Արցախից, 5-ը՝ Սյունիքի մարզից, 4-ական՝ Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերից, 2-ական Վայոց Ձորի և Տավուշի մարզերից:

Երևանը ներկայացնող շախմատիստները պետք է ունենան առնվազն 1-ին, իսկ մարզերի ներկայացուցիչները՝ առնվազն 2-րդ կարգ:

Մինչև 14 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն:

-2076 և բարձր ազգային վարկանիշով շախմատիստները.

-18 շախմատիստ Երևանից, 5-ական՝ Արցախից, Արարատի, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Արմավիրի մարզերից, 3-ական՝ Սյունիքի և Արագածոտնի մարզերից, 2-ական՝ Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերից: Մասնակցության իրավունք ունեն առնվազն 1-ին կարգային շախմատիստները (2-րդ կարգային շախմատիստներն իրավունք ունեն, եթե մարզային առաջնությունում գրավել են 1-ին տեղ):

Մինչև 16 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն.

-2151 և բարձր ազգային վարկանիշով շախմատիստները.

- 12 շախմատիստ Երևանից, 4-ական՝ Արցախից, Արարատի, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Արմավիրի մարզերից, 3-ական՝ Սյունիքի և Արագածոտնի մարզերից, 2-ական՝ Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերից: Մասնակցության իրավունք ունեն առնվազն 1-ին կարգային շախմատիստները (2-րդ կարգային շախմատիստներն իրավունք ունեն, եթե մարզային առաջնությունում գրավել են 1-ին տեղ):

Մինչև 18 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն 2050 և բարձր ազգային վարկանիշով շախմատիստները:

Մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն
- 2013թ.-ին ծնված առնվազն 3-րդ կարգ ունեցող շախմատիստուհիները
- 2014թ.-ին ծնված առնվազն 4-րդ կարգ ունեցող շախմատիստուհիները
- 2015թ.-ին և ավելի ուշ ծնված առնվազն 4-րդ կարգի մեկ բալ ունեցող շախմատիստուհիները

Մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն
- 2011 թ.-ին ծնված առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստուհիները
- 2012 թ.-ին ծնված առնվազն 3-րդ կարգ ունեցող շախմատիստուհիները
- մարզերից առնվազն 3-րդ կարգ ունեցող շախմատիստուհիները

Մինչև 14 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն առնվազն 2-րդ կարգային շախմատիստուհիները:

Մինչև 16 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության իրավունք ունեն առնվազն 1-ին կարգի 1 բալ ունեցող շախմատիստուհիները: Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարերի հայտերը Երևանի քաղաքային ֆեդերացիան և մարզային համապատասխան կազմակերպությունները պետք է ներկայացնեն Հայաստանի շախմատի ակադեմիա մինչև 2023 թ.-ի մարտի 11-ը / հայտերի ընդունման վերջնաժամկետն է/:

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ և եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում /հասցե՝ Շևչենկոյի փող.,34, հեռ.: +374 (10) 448476:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ

ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարերը կանցկացվեն 2023 թ. հունիսի 3-9-ը: Յուրաքանչյուր ակումբ /կազմակերպություն/ կարող է ներկայացնել միայն մեկական թիմ: Տղամարդկանց թիմերի կազմը՝ 6 հիմնական, 2 պահեստային խաղացողներ և 1 ավագ, իսկ կանանցը՝ 4 հիմնական, 1 պահեստային խաղացող և 1 ՝ ավագ: Հայտերը պետք է ներկայացնել մինչև 2023 թ. մայիսի 10-ը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐ

Հայաստանի արագ շախմատի կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի 2023 թվականի դեկտեմբերի 23-ին, Երևանում: Մասնակցության իրավունք ունեն մինչև 231 վարկանիշ ունեցող շախմատիստները: Մրցաշարում 1-15-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու 2024 թ.-ի Հայաստանի արագ շախմատի Աշոտ Անաստասյանի հիշատակին նվիրված եզրափակիչ մրցաշարին, որը տեղի կունենա հուլիսի 10-ին:

Մրցաշարն անցկացվում է 7-ը խաղափուլով, շվեյցարական մրցակարգով, 10 րոպե + 5-ական վայրկյան ժամանակակարգով:
Մասնակցության իրավունք ունեն.

ա. Տղամարդկանց և կանանց գրոսմայստերները, միջազգային, ՖԻԴԵ-ի և ազգային վարպետները,

բ. Արագ շախմատի 231 և բարձր վարկանիշ ունեցող շախմատիստները,

գ. Հայաստանի արագ շախմատի կիսաեզրափակիչ մրցաշարից 15 շախմատիստ,

*Ծանոթություն

Հայաստանի առաջնությունների ոչ երևանաբնակ մրցավարները և մասնակիցները /պետք է ներկայացնեն անձնագրի պատճեն, անչափահասները՝ ծննդյան վկայականի պատճե և ծնողի անձնագրի պատճե/ մրցումների ընթացքում կապահովվեն հյուրանոցով և օրապահիկով, եթե բնակվում են անցկացման վայրից 30 կմ և ավել հեռավորությամբ: